S9BY8420-05 (HY)
Նոյեմբեր 2011թ.

Շահագործման ու սպասարկման ձեռնարկ

Fusion տակնոցային եղաններ

B1G 1-Up (տակնոցային եղաններ)
B1H 1-Up (տակնոցային եղաններ)

Անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություններ

Արտադրանքի շահագործման, սպասարկման ու վերանորոգման ժամանակ տեղի ունեցող պատահարների մեծ մասի պատճառն անվտանգության տարրական կանոնների կամ նախազգուշական միջոցների անտեսումն է: Հաճախ պատահարներից կարելի է խուսափել՝ վաղօրոք ճանաչելով հավանական վտանգ պարունակող իրավիճակները: Պետք է ցուցաբերել զգոնություն՝ հավանական վտանգներից խուսափելու համար: Այդ գործառույթները պատշաճ իրականացնելու համար տվյալ անձը պետք է ունենա նաև անհրաժեշտ պատրաստվածություն, հմտություններ ու գործիքներ:

Այս արտադրանքի սխալ շահագործումը, յուղումը, սպասարկումը կամ վերանորոգումը վտանգավոր է և կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան:

Զեռնպահ մնացեք արտադրանքի շահագործումից և ցանկացած յուղման, սպասարկման կամ վերանորոգման աշխատանքներից, քանի դեռ չեք ընթերցել ու յուրացրել շահագործման, յուղման, սպասարկման ու վերանորոգման մասին տեղեկությունները:

Այս ձեռնարկում և արտադրանքի վրա առկա են անվտանգության ցուցումներ ու նախազգուշացումներ: Վտանգի մասին նախազգուշացումներն անտեսելը կարող է հանգեցնել Ձեզ կամ այլ անձանց մարմնական վնասվածքի հասցման կամ մահվան:

Վտանգները նշված են "Զգուշացնող նշանով", որին հետևում է "Նշանաբառը", օրինակ՝ "DANGER" ("ՎՏԱՆԳ"), "WARNING" ("ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ") կամ "CAUTION" ("ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ"): Զգուշացնող "WARNING" ("ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ") պիտակը ցուցադրված է ստորև:

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Այս զգուշացնող նշանի իմաստը հետևյալն է.

Ուշադրությու՛ն: Զգուշացե՛ք: Խնդիրը Ձեր անվտանգությունն է:

Նախազգուշացման տակ գտնվում է վտանգը պարզաբանող ուղերձ, որը կարող է լինել գրավոր կամ պատկերային:

Արտադրանքի վնասման հավանական պատճառ հանդիսացող գործողությունների սահմանափակ ցանկը արտադրանքի վրա և այս հրապարակման մեջ նույնականացված է "NOTICE" ("ԾԱՆՈՒՑՈՒՄ") պիտակով:

Caterpillar-ն անկարող է կանխազգուշակել հավանական վտանգ պարունակող բոլոր հնարավոր հանգամանքները: Հետևաբար, բոլոր նախազգուշացումները չեն, որ ընդգրկված են այս հրապարակման մեջ և արտադրանքի վրա: Այս արտադրանքը չի կարելի օգտագործել այս ձեռնարկում նկարագրվածից բացի որևէ այլ եղանակով, եթե վստահ չեք, որ հաշվի եք առել անվտանգության այն բոլոր կանոնները և նախազգուշական միջոցները, որոնք վերաբերում են համապատասխան վայրում արտադրանքի շահագործմանը, այդ թվում տվյալ տեղանքին առնչվող կանոններն ու նախազգուշական միջոցները: Caterpillar-ի կողմից հատուկ չնախատեսված գործիք, ընթացակարգ, կամ շահագործման եղանակ կիրառելու դեպքում նախ հավաստիացեք, որ դա անվտանգ կլինի Ձեզ և այլոց համար: Անհրաժեշտ է նաև հավաստիանալ, որ արտադրանքը չի վնասվի կամ նրա շահագործումը վտանգավոր չի դառնա Ձեր նախատեսած յուղման, սպասարկման ու վերանորոգման աշխատանքների իրականացման արդյունքում:

Այս հրապարակման մեջ առկա տեղեկությունները, բնութագրերն ու պատկերները հիմնված են այն տեղեկությունների վրա, որոնք մատչելի են եղել դրա ստեղծման պահին: Բնութագրերը, պտտող մոմենտները, ճնշումները, չափերը, կարգաբերումները, պատկերները և այլ տվյալներ կարող են փոփոխվել ցանկացած ժամանակ: Այդ փոփոխությունները կարող են ազդել արտադրանքի սպասարկման վրա: Նախքան ցանկացած աշխատանք սկսելը ստացեք ամբողջական ու առավել արդիական տեղեկություններ: Cat-ի ներկայացուցիչները տիրապետում են հնարավոր ամենաարդիական տեղեկություններին:

⚠ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Այս մեքենայի համար պահեստամասերի կարիք առաջանալու դեպքում Caterpillar-ը խորհուրդ է տալիս օգտագործել Cat-ի պահեստամասերը կամ այնպիսիք, որոնք ունեն համարժեք բնութագրեր՝ ներառյալ, բայց ոչ միայն չափերի, տեսակի, ամրության և նյութերի առումով:

Այս նախազգուշացմանը չհետևելը կարող է հանգեցնել վաղաժամ խափանումների, ապրանքի վնասման, մարմնական վնասվածքների կամ մահվան:

Միացյալ Նահանգներում արտանետումների վերահսկման սարքավորումների ու համակարգերի սպասարկումը, փոխարինումը կամ վերանորոգումը կարող է իրականացվել ցանկացած վերանորոգման կետի կամ անհատի կողմից՝ սեփականատիրոջ հայեցողությամբ:

Բովանդակություն

Նախաբան 4

Անվտանգության բաժին

Անվտանգության ուղերձներ 5

Ընդհանուր տեղեկություններ վտանգների մասին 6

Ճզմման ու կտրվածքների կանխում 8

Այրվածքների կանխում 9

Հրդեհի ու պայթյունի կանխում 9

Նախքան շահագործումը 11

Շահագործում 11

Տեղեկություններ աղմուկի և թրթռման մասին 12

Արտադրանքի մասին տեղեկությունների բաժին

Ընդհանուր տեղեկություններ 13

Նույնականացման տվյալներ 20

Շահագործման բաժին

Շահագործում 22

Տեղեկություններ տեղափոխման մասին 31

Սպասարկման բաժին

Սպասարկման գծով աջակցություն 33

Սպասարկման պարբերականության ժամանակացույց 34

Տեղեկատու հղումների բաժին

Տեղեկատու նյութեր 39

Այբբենական ցանկի բաժին

Այբբենական ցանկ 40